

Ձմեռ մե դառներ մղլած են մըջ դոմուն:

Զդուռ զարկին:

— Էն ո՞ն է,— ձեն կիտան դառներ:

— Ճամպորդ իմ, հեռու տեղե գիկամ, դուրս լե շատ ցուրտ է, նեղեցուկ իմ, չոտքսի կը ցավա, իլալի մեկ չոտքս օր քամոտ է, պաղելուց ժած չի գա, էղեր է փետ: Ձեր մամու-պապու հոգուն՝ զդուռ փշու մե ծռպեք, զոտքսի տաքցում:

Կառներ խորուրդք կէնին:

— Բանա՞նք, թե չը բանանք. բանանք,— կըսին,— խեղճ է, թըղ զուր մեկ չոտք չերկընցու ներս, տաքնա, մըզի ի՞նչ վնաս կէղնի: Դուռ կը ծռպվի, գեվեն զուր չոտք գերկընցու ներս:

— Տեսա՞ք, ձագուկնե՛ր, ձըզի վնաս մե էղա՞վ, թողեք մեկել չոտքս լե մտում ներս: Մեկ չոտք օր զարար չէրեց՝ էրկուսն լէ չըն էնի:

— Օղո՛րդ կըսե,— ըսին,— մեկ չոտք օր վնաս չի տա՝ էրկուսն լե չի տա:

Ու զդուռ կիսբաց էրին, գեվեն զմեկել չոտքն ու գլուխն ու ջան-դըկի կես ներս կը մտու, մեկ էլ տեսան՝ դուռ ու դրընտեք վրեն կախ՝ ներս սըլթըվավ, քանի մե հատ չոտքերու տակ ճխլեց, եր օր նստավ՝ քանի հատ լե տակ մանցին, մեկելներ թողին փախան, գոմ մնաց դեվին:

